ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(2020 - 2025 ԹԹ.)



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (ՀՊՄՀ) բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի առաքելությունը կրթության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների, մշակույթի և արվեստի ոլորտներում ՀՀ ազգային և միջազգային աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտական կայուն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունեցող, սոցիալական պատասխանատվությամբ, ազգային, ժողովրդավարական, հումանիստական արժեքներով առաջնորդվող և դրանք տարածող մասնագետ-մանկավարժների պատրաստումն է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումներով, որն իրականացվում է՝ ստեղծելով ուսանողակենտրոն միջավայր, ինչը բնութագրվում է նախագծերի և իրական դեպքերի շուրջ մշակված դասընթացների իրականացմամբ՝ ապահովելով ճկուն կրթական ծրագրեր: Բուհի ուսանողները, առնչվելով ազգային և միջազգային փորձին և իրականացնելով հետազոտություններ կրթության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների, մշակույթի և արվեստի ոլորտներում, կոգեշնչվեն՝ դառնալու շարունակաբար զարգացող համապատասխան ոլորտների մասնագետներ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

ՀՊՄՀ տեսլականն է ուսուցանվող մասնագիտական ոլորտներում մատուցվող կրթական ծառայություններում բուհը դարձնել նորարարական, գործնական հետազոտական կարողություններ և հմտություններ տրամադրող, գիտելիքահենք, ստեղծագործ միտք զարգացնող, անձի շարունակական զարգացում ապահովող, ազգային, բարոյական, հոգևոր և համամարդկային արժեքներ սերմանող առաջատար հաստատություն հանրային ամենատարբեր շերտերի ներկայացուցիչների համար: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հանդես է գալու որպես մանկավարժական գործունեության գաղափարների, մոդելների ստեղծող, նախաձեռնող և տարածաշրջանային կրթական տարածքում նորարարական գործընթացների ներդնող ուսումնահետազոտական միջավայր: Այս տեսլականի իրականացումն ապահովվելու է երկրում առկա կրթական և մշակութային գործընթացների զարգացման հեռանկարների ոլորտում առաջադեմ հիմնարար հետազոտություններով, տնտեսության, սոցիալական և մշակութային ոլորտներում գիտության և կրթության ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությամբ և արդիականացմամբ, համընդհանուր ներառականության սկզբունքների ներդրմամբ և մանկավարժական կրթության նոր ռազմավարությունների մշակմամբ և արդյունավետորեն ներդրմամբ, որը կբերի ուսուցչի մասնագիտության տրանսֆորմացիայի՝ 21-րդ դարի հմտությունների լայն տիրապետմամբ:

ՀՊՄՀ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համալսարանը կարևորում է գործընկերային շահերի և որոշումների ընդունումը, պահպանում է բազմակարծության և ժողովրդավարության սկզբունքները, խրախուսում է գիտելիքի մատչելի հասանելիությունը, ուսումնառության, ինչպես նաև դասավանդման ձևերի ու մեթոդների ընտրության ազատությունը: Հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման տրամաբանությունը տեսանելի է մասնակցային և համագործակցային ուղենիշներով, որտեղ մասնակցության հարացույցը ներառում է կրթական համակարգում նոր մշակույթի ձևավորմանն ուղղված ջանքերը՝ ինչպես ՄՈՒՀ–հասարակություն, այնպես էլ հասարակություն-ՄՈՒՀ- հարթություններում, իսկ համագործակցային բաղադրիչը ներառում է մասնագիտական կայացմանն առնչվող շահերի վրա խարսխված համապատասխան մասնագիտական համայնքի ձևավորմանը նպաստող քայլերի ամբողջականությունը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ

Համալսարանն առաջնային է համարում ուսանողակենտրոն ուսումնառությունն ու ուսանողի կրթական առաջընթացը, ուսանողի կրթական ձեռքբերումները և ուսումնառությունից նրա բավարարվածությունն ու հաջողությունները: Համալսարանի աշխատանքները միտված են ուսանողների կարիքների հաշվառմամբ նրա ՀՊՄՀ-ական գործունեության և օժանդակ ծառայությունների կազմակերպմանը, ինչպես նաև կրթական գործընթացներում համապատասխան քաղաքականության ու կրթական ծրագրերի մշակմանը՝ համաձայն ազգային ինքնությամբ, պետական

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

առաջնայնություններով և հանրային բարեկացությամբ սահմանված սկզբունքների:

Համալսարանը կարևորում է ուսանողի և աշխատողի թիմային, ազնիվ, թափանցիկ և հաշվետվողական աշխատանքը, կարևորում և խրախուսում է ՄՈՒՀ-ի հեղինակության նկատմամբ յուրաքանչյուր աշխատակցի և ուսանողի բարձր պատասխանատվությունը, ակադեմիական ազնվությունը և բարեվարքությունը: Համալսարանը կարևորում է հասարակության առջև իր պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը և ներկայացնում է իր գործունեությունը հրապարակային հարթակներում:

ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համալսարանում կարևորվում է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու մատչելի և բարձրորակ կրթություն ստանալու հնարավորության ընձեռումը՝ առանցքային համարելով բարձրակարգ գիտամանկավարժական համակազմի ապահովումը:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Համալսարանն իր հաջողության գրավականն է համարում աշխատակիցների և ուսանողների՝ նորարարությանը միտված ակտիվությունն ու ստեղծարար դրսևորումը, արժևորում ու խրախուսում է խնդիրների լուծմանն ուղղված նորարարական գաղափարներն ու մոտեցումները, հետագա կիրառումը և զարգացման հնարավորությունը: Համալսարանը կարևորում է իր փեսլականի և առաքելության իրագործմանը միտված որակի ներքին ապահովման մշակույթի ամրապնդումը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1

ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ՝ ԱՊԱՀՈՎԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդիր 1. Վերանայել և լրամշակել որակյալ կրթական ծառայությունների մատուցման նորմատիվահիրավական հենքը

Գործողություններ/միջոցառումներ

1. ՀՊՄՀ-ի նոր ՌԾ-ն կողմնորոշող և հստակությունը երաշխավորող տեսլական և առաքելություն
2. ՌԾ-ում սահմանված նպատակների և խնդիրների իրականացում ապահովող ամրագրված ԳԱՑ-երի վերլուծություն
3. Խթանել բոլոր շահակիցների առավել ակտիվ ներգրավվածությունը ՌԾ մշակման/վերանայման գործընթացում՝ կարևորելով շարունակական և անընդհատ կապը հատկապես արտաքին շահակիցների հետ:
4. Մշակել ՄԿԾ-ի (մասնագիտական կրթական ծրագիր) ղեկավարման ամբողջական ընթացակարգ
5. Վերանայել ՀՊՄՀ-ում գործող իրավանորմատիվային հենքը՝ հաշվի առնելով շահակիցների կարիքները
6. Լավարկել ՄԿԾ-ում հետազոտական և նախնական մասնագիտական փորձառության ձևավորման (պրակտիկայի) քաղաքականությունը

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. ՄԿԾ-ի ղեկավարման ընթացակարգի կիրառման վերաբերյալ փաստական տվյալներ՝ զեկույցներ, հաշվետվություններ, արձանագրություններ

1.2. ՀՊՄՀ-ում լրամշակված և լավարկված իրավանորմատիվային փաստաթղթերի կիրարկման վերաբերյալ փաստական տվյալներ՝ զեկույցներ, հաշվետվություններ, արձանագրություններ

1.3. ՄԿԾ-ում հետազոտական և նախնական մասնագիտական փորձառության ձևավորման (պրակտիկայի) նորովի քաղաքականության, գործիքակազմերի վերաբերյալ հարցումների, ֆոկուս-խմբերի միջոցով մշտադիտարկման զեկույցներ, հաշվետվություններ, արձանագրություններ

Խնդիր 2. Իրականացնել մասնագիտական ոլորտում առաջատար միջազգային և ներհանրապետական ՄՈՒՀ-երի կրթական ծրագրերի հենանշում (բենչմարկ)՝ միջազգային և ներհանրապետական շարժունության խթանման նպատակով

Գործողություններ/միջոցառումներ

1. Իրականացնել առաջատար ՄՈՒՀ-երի համապատասխան ՄԿԾ-ների բենչմարկ
2. Ընդլայնել ուսումնանական ստորաբաժանումների աշխատակիցների մասնակցությունը միջազգային համագործակցության և շարժունության իրականացման գործընթացներին

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

Միջազգային և ներպետական ոլորտում առաջատար ՄՈՒՀ-երի համապատասխան կրթական ծրագրերի հետ առնվազն 50% համադրելություն

Խնդիր 3. Նպաստել մասնագիտական կրթական ծրագրերի արդյունահեն և հետազոտահեն վերջնարդյունքների ձևավորմանը՝ ելնելով շահակիցների կարիքներից և առաջանցիկ փորձի ներդրման անհրաժեշտությունից

Գործողություններ/միջոցառումներ

1. Բացահայտել շահակիցների կարիքները և բավարարվածությունը ՄԿԾ վերջնարդյունքներից
2. Վերանայել ուսումնական պլանները՝ ըստ առարկայական վերջնարդյունքների և ECTS կրդիտների տրամադրման տեսակարար կշռի
3. Շահեկիցների ներգրավմամբ՝ վերլուծել առկա ՄԿԾ-ներում դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները, ժամանակակից փորձը՝ մշակելով մեթոդների ընտրության և բազմազանեցման հայտանիշներ
4. Ըստ կրթական աստիճանների ու ուղղվածությունների՝ զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները
5. Ապահովել դասընթացների վերջնարդյունքների ներդաշնակեցումը կրթական ծրագրերի վերջնարդյունքներին
6. Վերհանել մասնագիտական նախնական փորձառության (պրակտիկայի) շրջանակներում ՄԿԾ վերջնարդյունքների իրագործելիությունը, համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին
7. Բարելավել կամ վերամշակել մասնագիտական նախնական փորձառության (պրակտիկայի) իրականացման քաղաքականությունը և ուղեկցող փաստաթղթերը

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

3.1. Շահակիցների կարիքների վերաբերյալ իրականացված հարցումների հիման վրա վերլուծություններ և առաջարկությունների փաթեթներ, դրանց մասին քննարկման փաստական տվյալներ՝ արձանագրություններ, որոշումներ

3.2. Վերանայված ուսումնական պլանների առկայություն՝ ըստ ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլի փաստական տվյալներ

3.3. ՄԿԾ-երում դասավանդման, ուսումնառության և գնահատման բազմազանեցված և հիմնավորված մեթոդներ, մշակված հայտանիշների մասին վերլուծություն

3.4. Դասավանդման և ուսումնառության աջակցման մեթոդական ուղեցույցների կիրառման վերաբերյալ փաստական տվյալներ՝ կարծիքներ, արձանագրություններ, բարելավման պլաններ

3.5. Կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխան և համադրելի դասընթացների գնահատման մեխանիզմների կիրառման մասին փաստական տվյալներ

3.6. Պրակտիկա-աշխատաշուկա գործակցության վերաբերյալ շարունակական բարելավման պլանների առկայություն, շահակիցների հարցման արդյունքների վերլուծություն

3.7. Պրակտիկայի իրականացման վերաբերյալ մշակված ամբողջական քաղաքականություն և ուղեկցող փաստաթղթեր՝ հաստատված գիտական խորհրդի կողմից

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ՝ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՍՏԵԼՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԻՆՏԻՏՈՒՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ՝ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խնդիր 1. Լավարկել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության ցուցանիշները

Գործողություններ/միջոցառումներ

1. Շարունակաբար զարգացնել համալսարանի առաքելությունից բխող գիտական ուղղությունները՝ **մանկավարժություն, հոգեբանություն, դասավանդման մեթոդիկաներ, հայագիտություն**
2. Բարելավել և բազմազանեցնել ՄՈՒՀ-ի գիտական թեմաների որակական ցուցանիշները
3. Մշակել թեկնածուական, դոկտորական ատենախոսությունների որակի բարելավման արդյունավետ մեխանիզմներ՝ նպատակաուղղելով կոնկրետ ոլորտներում (ուղղություններով) գործնական խնդիրների լուծմանը
4. Շարունակաբար զինել գիտական լաբորատորիաները ժամանակակից սարքավորումներով
5. Կազմակերպել միջազգային և հանրապետական գիտական ֆորումներ, համալսարանի առաջատար գիտական ուղղություններով
6. Ստեղծել միջգերատեսչական գիտական լաբորատորիա
7. Մշակել դպրոց-ՄՈՒՀ-- գիտական կապի ամրապնդմանը և արդյունավետության բարձրացման վերաբերյալ ուղեցույցներ, մեթոդական ձեռնարկներ

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Գերակա ուղղությամբ յուրաքանչյուր տարում **առնվազն** 300 գիտական հոդված միջազգային և հանրապետական գիտաչափական շտեմարաններում ընդգրկված գիտական ամսագրերում, հինգ մենագրություն կամ ձեռնարկ

1.2. ՄՈՒՀ--ում իրականացվող գիտական թեմաների ազդեցության գնահատման համար մշակված որակական ցուցանիշների առկայություն և դրանց կիրառում

1.3. Համալարանի գիտական առաջնահերթություն ներկայացնող արդիական թեմաներով պաշտպանված և ներդրված ատենախոսությունների տարեկան առնվազն 2 տոկոս աճ

1.4. Հաշվետու ժամանակաշրջանում, ժամանակակից չափանիշներին համապատասխան, առնվազն մեկ գիտական նոր լաբորատորիայի ստեղծում և գործարկում

1.5. Միջազգային և հանրապետական գիտական ֆորումներ՝ յուրաքաչյուր երեք տարին մեկ միջազգային և տասը հանրապետական:

1.6. 2025թ. ՀՊՄՀ-ում գործող միջգերատեսչական գիտական լաբորատորիայի առկայություն

1.7. Հինգ տարվա ընթացքում առնվազն հինգ մեթոդական ձեռնարկների, մեթոդական ուղեցույցերի ներդրում դպրոցում մանկավարժական գործընթացում

Խնդիր 2. Նպաստել համալսարանում գիտական հրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը և գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացմանը

Գործողություններ/միջոցառումներ

1. Ստեղծել գիտական նոր ինստիտուտներ և լաբորատորիաներ
2. Հիմնադրել նոր գիտական պարբերականներ՝ ներգրավելով դրանք միջազգային գիտաչափական շտեմարաններում
3. Մշակել և ներդնել միջազգային շտեմարաններում ընդգրկված պարբերականներում ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների (պրոֆեսորադասախոսական անձնակազմ) հետազոտությունների հրատարակումը խթանող մեխանիզմներ
4. Մշակել և ներդնել ՄՈՒՀ-ի ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների գիտական գործունեության գնահատման և վարկանիշավորման արդյունավետ համակարգ
5. Ընդլայնել միջազգային և ներպետական գիտական կառույցների հետ ուղիղ համագործակցության ուղղություններն ու ձևերը

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

2. 1. Հաշվետու ժամանակաշրջանում երկու նոր գիտական լաբորատորի և մեկ ինստիտուտի ստեղծում

2.2. Նոր գիտական պարբերականների ներգրավում միջազգային Scopus, WoS և այլ գիտաչափական շտեմարաններում

2.3. Միջազգային շտեմարաններում ընդգրկված պարբերականներում ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների (պրոֆեսորադասախոսական անձնակազմ) հետազոտությունների հրատարկման տարեկան առնվազն երեք տոկոս աճ

2.4. ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների գիտական գործունեության գնահատման և վարկանիշավորման ընթացակարգի առկայություն և կիրառման վերաբերյալ փաստական տվյալներ

2.5. Միջազգային և ներպետական գիտական կառույցների հետ համագործակցային առնվազն երեք գործող պայմանագրի առկայություն

Խնդիր 3. Նպաստել համալսարանում գիտական կադրերի պատրաստմանը և շարունակական վերապատրաստմանը

Գործողություններ/Միջոցառումներ

1. Մշակել Համալսարանում գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման քաղաքականություն և մեխանիզմներ
2. Մշակել և ներդնել Համալսարանում գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման, կարիքների վերհանման և մշտադիտարկման արդյունավետ գործիքակազմեր
3. Ընդլայնել արտաքին գործընկերների հետ համատեղ վերապատրաստման և որակավորման բարձրացման նոր մոդելների ներդրման գործընթացը
4. Մշակել և ներդնել Համալսարանի գիտական հենքի վրա սփյուռքի մեր հայրենակիցների և օտարազգի գիտնականների վերապատրաստման գործուն մեխանիզմներ

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

3. 1. Համալսարանի գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման տարեկան առնվազն 20 տոկոս աճ

3. 2. Համալսարանում գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման, կարիքների վերհանման և մշտադիտարկման էլեկտրոնային համակարգի աշխատանքի վերաբերյալ վերլուծություններ տարեկան կտրվածքով

3.3. Արտաքին գործընկերների հետ համատեղ վերապատրաստման և որակավորման բարձրացման առնվազն երեք նոր ծրագրերի առկայություն

3. 4. Սփյուռքահայ և օտարազգի գիտնականների, հետազոտողների վերապատրաստման գործող ծրագրերի աճ և մասնակիցների թվաքանակի ավելացում

Խնդիր 4. Աջակցել մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ փորձի տարածմանը

Գործողություններ/միջոցառումներ

1. Ստեղծել Համալսարանի ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների հեղինակային իրավունքների պաշտպանության ներհամալսարանական մեխանիզմներ
2. Շարունակել ապահովել համալսարանի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների ներդրման հաշվին միջազգային ծրագրերից ստացված արտաբյուջետային միջոցների աճ
3. Մշակել Համալսարանի աշխատողների գիտական գործունեության արդյունքների ապրանքայնացման, աշխատաշուկայի համապատասխան ոլորտներում դրանց ներդրումայնության բարձրացման մեխանիզմներ

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

4.1. Համալսարանի ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների հեղինակային և հարակից այլ իրավունքներով պաշտպանված գիտական մտքի, թեմաների տարեկան աճ

4.2. Համալսարանում ՊԴԱ-ի, երիտասարդ գիտնականների, հետազոտողների գիտական միջազգային ծրագրերի տարեկան երկու տոկոս աճ

4.3. Համալսարանի աշխատողների գիտական գործունեության արդյունքների ապրանքայնացման որոշակի աճ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ՆՊԱՏԱԿ՝ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ԱՊԱՀՈՎԵԼՈՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խնդիր 1. Շարունակական բարելավել և լավարկել համալսարանի կազմակերպական կառուցվածքը

Գործողություններ/միջոցառումներ

1. Լավարկել ՀՊՄՀ կազմակերպական կառուցվածքը՝ նպատակաուղղելով ստորաբաժանումների գործունեությունը ռազմավարական հիմնական ուղղությունների
2. Վերանայել Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնային նկարագրերը՝ բացառելով փոխհատվող և կրկնվող գործառույթները
3. Մշակել Համալսարանի ստորաբաժանումներում գործուն մարտավարական քայլեր՝ ապահովելով հորիզոնական և ուղղահայաց կառավարման սկզբունքները
4. Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում ներդնել գործառույթների որակի կառավարման ամբողջական համակարգ՝ (ՊԻԳԲ)

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Արդյունավետ և լավարկված կազմակերպական կառուցվածք, ռազմավարական հիմնական ուղղությունների իրականացման վերաբերյալ կառուցվածքային ղեկավարների գործունեության վերաբերյալ ֆոկուս հարցումներ, հաշվետվություններ

1.2. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնային նկարագրերի առկայություն՝ ըստ զբաղցերած պաշտոնի

1.3. Համալսարանի ստորաբաժանումներում գործուն մարտավարական ծրագրերի իրականացման վերաբերյալ զեկույցներ, քննարկումների արձանագրություններ, հաշվետվություններ

1.4. Համալսարանի բոլոր ստորաբաժանումների գործառույթների կառավարման գործողությունների ժամանակացույց հաշվետու ժամանակահատվածի համար՝ ըստ ՊԻԳԲ համակարգի

Խնդիր 2 Լավարկել Համասարանի կառավարման գործընթացների կատարողական ցուցիչները

Գործողություններ/միջոցառումներ

1. Մշակել Համալսարանի կառավարման ենթակառույցների գործունեության արդյունավետության քանակական և որակական ցուցիչներ
2. Բարելավել որոշումների կայացման գործընթացում շահակիցների ներգրավման և դրանց վերաբերյալ իրազեկման մեխանիզմները
3. Ներդնել Համալսարանում ներքին փաստաթղթաշրջանառության համակարգ
4. Բարելավել ՀՊՄՀ բարեվարքության կանոնների և հակակոռուպցիոն մեխանիզմների լայն կիրառման մեխանիզմները

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

2.1. Համալսարանի կառավարման ենթակառույցների գործունեության արդյունավետության քանակական և որակական ցուցիչների մասին հաշվետվություն և լավարկման պլան

2.2. Որոշումների կայացման գործընթացում շահակիցների իրազեկման և ակտիվ ներգրավման ցուցիչների աճ տարեկան կտրվածքով

2.3. Համալսարանում ներքին փաստաթղթաշրջանառության համակարգի գործունեության վերաբերյալ արդյուանվետության ցուցիչներ

2.4. Համալսարանում ներքին փաստաթղթաշրջանառության համակարգի գործունեության վերաբերյալ արդյուանվետության ցուցիչներ

2.5. Համալսարանում գործող բարեվարքության կանոնների և հակակոռուպցիոն մեխանիզմների կիրառման վերաբերյալ փաստական տվյալներ՝ [illegible]

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4

ԴԻՄՈՐԴՆԵՐ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 1՝ ԼԱՎԱՐԿԵԼ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Խնդիր 1. Բարելավել և ընդլայնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման մեխանիզմները՝ խթանելով ապագա դիպորդների ակտիվ ներգրավվածությունը Համալսարանի գործունեության տարբեր գործընթացներում

Գործողություններ/միջոցառումներ

1. Վերամշակել դիմորդների մասնագիտական կողմնորոշման իրականացման քաղաքականությունը՝ ցուցաբերելով հստակ մարքեթինգային մոտեցում
2. Կազմակերպել պարբերական այցեր հանրակրթական ուսումնական հաստատություններ մասնագիտական կողմնորոշման շրջանակներում
3. Իրականացնել դիմորդների հավաքագրման, ընտրության և Համալսարան ընդունելության մեխանիզմների արդյունավետության վերլուծություն
4. Համագործակցել Համալսարանի համապատասխան ենթակառուցների հետ դիմորդների մասնագիտական կողմնորոշման, համալսարանի կրթական ծրագրերի ներկայացման գործընթացում
5. Մշակել և ներդնել մինչհամալսարանական կրթության ապահովման արդյունավետ մեխանիզմներ
6. Ներդնել և զարգացնել «Համալսարանական դպրոցներ»-ը

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. ՀՊՄՀ դիմորդների մասնագիտական կողմնորոշման իրականացման քաղաքականության արդյունքում մասնագիտական կողմնորոշման կայուն և զարգացող համակարգ:

1.2. ՀՊՄՀ դիմորդների տարեկան առնվազն քսան տոկոս աճ:

1.3. Համալսարան դիորդների ընտրության մեխանիզմների բարելավման պլան-ժամանակացույց

1.4. Համալսարանում գործող կրթական ծառայությունների ներկայացման վերաբերյալ հստակ ժամանակացույցի առկայություն

1.5. Մինչհամալսարանական կրթության ապահովման գործող ընթացակարգերի առկայություն և ներդման հստակ ժամանակացույց

1.6. 2025թ. Համալսարանին կից առնվազն 3 դպրոցի

ՆՊԱՏԱԿ 2՝ ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ԼԱՎԱՐԿԵԼ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ՝ ԱՊԱՀՈՎԵԼՈՎ ՆԱԵՎ ՎԵՐՋԻՆԵՐԻՍ ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆԸ

Խնդիր 1. Բարելավել և ընդլայնել Համալսարանի ուսանողական կազմավորումների դերն ու գործունեությունը բոլոր գործընթացներում

Գործողություններ/միջոցառումներ

1. Մշակել և ներդնել ուսանողների կրթական և այլ կարիքների վերհանման հստակ ու գործուն մեխանիզմներ
2. Իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին՝ նպաստելով ուսանողների իրավագիտակցական մակարդակի բարձրացմանն ու ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը
3. Միավորել համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ խթանելով ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը
4. Ապահովել ուսանողների ակտիվ մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացներին
5. Ակտիվացնել համագործակցությունը ՀՀ-ում և արտերկրում գործող ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական այլ անձանց հետ

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Ուսանողների կրթական և այլ կարիքների վերհանման հստակ ու գործուն գործիքակազմ՝ ներդրման արդյունավետության ցուցիչներով

1.2. Բարձր իրավագիտակցություն և քաղաքացիական կեցվածք ունեցող ուսանողների թվաքանակի շեշտակի աճ

1.3. Համալսարանի ուսանողական կազմակերպություններում, ակումբներում և միություններում ուսանողների թվաքանակի շեշտակի աճ

1.4. Համալսարանի կառավարման գործընթացներում ուսանողների ներգրավվածության և մասնակցության ցուցանիշների զգալի աճ

1.5. ՀՀ և արտերկրում գործող ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների հետ համագործակցային ծրագրերի տարեկան առնվազն երկու ծրագիր

ՆՊԱՏԱԿ 3՝ ՆՊԱՍՏԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌՋԵՎ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀՊՄՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՊԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Խնդիր 1. Աջակցել Համալսարան-դպրոց-գործատու կապի ձևավորմանը և զարգացմանը՝ ապահովելով շրջանավարտների սահուն ներհոսքը ուսումնառությունից աշխատանք:

Գործողություններ/միջոցառումներ

1. Մշակել և ներդնել Համալսարան – գործատու կապի ապահովման էլեկտրոնային կայք, բազա
2. Իրականացնել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ սոցիոլոգիական վերլուծություններ՝ կրթական ծրագրերի շարունակական լավարկման համար
3. Ուսումնասիրել մասնագիտական առանձին ոլորտների մասնագետների պահանջարկը
4. Մշակել պրակտիկայի, կամավոր աշխատանքի, վերապատրաստման և փորձի ձեռքբերման այլ ժամանակակից ձևերի և միջոցների վերաբերյալ առաջարկություններ, ծրագրեր
5. Կազմակերպել տարբեր ցուցահանդեսներ (մասնավորապես՝ «աշխատանքի տոնավաճառ», «կարիերայի օր» և այլն), գործատուների հետ հանդիպումներ, կազմակերպությունների ներկայացումների (շնորհանդեսների), էքսկուրսիաներ, փոխայցելություններ և այլ միջոցառումներ
6. Հիմնել ՀՊՄՀ շրջանավարտների միավորում
7. Կազմակերպել աջակցման գործընթացներ՝ աշխատանքի որոնման, մոտիվացիոն նամակի մշակման, աշխատանքի հարցազրույցի ներկայացման և այլ հմտությունների ձևավորման նպատակով

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Համալսարան-գործատու բազմագործառնական կայքից օգտվողների տարեկան ցուցանիշների շեշտակի աճ

1.2. Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման պլաններում գործատուների առաջարկի շեշտակի աճ

1.3. Առանձին ոլորտներում մասնագետների պատրաստման վերաբերյալ վերլուծություն և հստակ առաջարկության փաթեթ տարեկան մեկ անգամ

1.4. Կամավոր աշխատանքներում, վերապատրաստման և փորձի ձեռքբերման այլ ժամանակակից ձևերում ներգրավված շրջանավարտների թվակազմի տարեկան առնվազն քսան տոկոս աճ

1.5. Շրջանավարտների զբաղվածության ցուցանիշների տարեկան երեսուն տոկոս աճ

1.6. ՀՊՄՀ շրջանավարտների ներգրավվածության աճ բուհի ռազմավարական խնդիրների լուծման գործընթացներում

1.7. Աշխատանքային գործունեության պատրաստ հմտություններով շրջանավարտների շեշտակի աճ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՆՊԱՏԱԿ՝ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Խնդիր 1. Բարելավել Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը

Գործողություններ/միջոցառումներ

1. Ուսումնասիրել և վերլուծել առաջատար համալսարաններում մարդկային ռեսուրսների կառավարման մոդելներն ու ձևերը
2. Արդիականացնել ՄՈՒՀ-ում իրականացվող ՄԿԾ չափանիշներին համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի տարակարգերի և պաշտոնների տեղակալման ու առաջքաշման չափանիշները
3. Իրականացնել վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ առկա ներուժի գնահատում՝ և մշակել հաստիքացուցակ հիմնված ուսանող- պրոֆեսորադասախոսական անձնակազմ, ուսանող-վարչական կազմ, ուսանող-ուսումնաօժանդակ կազմ և այլ ցուցանիշների արդյունավետության վրա հաշվի առնելով կառավարման գործընթացների և ռեսուրսային ապահովվածության օպտիմալացումը
4. Արդիականացնել Համալսարանում անձնակազմի աշխատանքի ընդունելության, պաշտոնների տեղակալման իրավական ընթացակարգերը

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Համալսարանում մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ մոդելի ներդման առաջարկների փաթեթ ներկայացում

1.2. Արդիականացված աշխատակազմի տարակարգերի և նկարագրերի առկայություն

1.3. Անձնակազմի առաջքաշման հստակ և կանխատեսելի մեխանիզմների առկայություն

1.4. Անձնակազմի վարկանիշավորման համակարգի կիրառմաբ վերաբերյալ փաստական տվյալներ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ՝ ԱՊԱՀՈՎԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐՀՈՍՔԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՊԵՏԱԿԱՆ, ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

Խնդիր 1. Նպատակաուղղել Համալսարանի ֆինանսական հոսքերի պլանավորումը և կառավարումը համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների արդյունավետ իրականացմանը

Գործողություններ/միջոցառումներ

1. Մշակել կարճաժամկետ և միջնաժամկետ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխման պլաններ ՀՊՄՀ գործունեության բոլոր բնագավառներում՝ ըստ ռազմավարական պլանի պահանջների
2. Բազմազանեցնել կրթական, գիտական և այլ վճարովի մատուցվող ծառայությունները՝ բարձրացնելով դրանց եկամտաբերությունը
3. Աջակցել ՀՊՄՀ կառուցվածքային ստորաբաժանումների նախաձեռնող ղականության դրսևորմանը ինքնուրույն ֆինանսական միջոցների ձևավորման գործընթացներում
4. Մշակել յուրաքանչյուր կրթական ծրագրի մեկ կրեդիտի հաշվարկման մեթոդաբանություն՝ ելնելով մասնագիտության եկամտաբերության, նպատակահարմարության և մրցունակության տեսանկյունից
5. Մշակել և ներդնել ՀՊՄՀ ծախսերի և եկամուտների շարունակական վերլուծության և ռեսուրսների արդյունավետ օգտագործման

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Կարճաժամկետ և միջնաժամկետ ֆինանսական ռազմավարական ճկուն պլանների առկայության վերաբերյալ փաստական տվյալներ՝ արձանագրություններ, հաշվետվություններ

1.2. Կրթական, գիտական և այլ վճարովի մատուցվող ծառայություններից ստացվող արտաբյուջետային միջոցների տարեկան միջինում 2% աճ

1.3. ՀՊՄՀ տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների՝ ֆինանսական միջոցների հայթայթման, բյուջեի պլանավորման վերաբերյալ հմտություններով օժտված աշխատակիցների թվաքանակի տարեկան մինչև 3% աճ

1.4. Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար մեկ կրեդիտի արժեքի ձևավորման վերաբերյալ սահմանված և հաստատված մեթոդաբանության առկայություն և կիրառում

1.5. Ծախսերի և եկամուտների շարունակական վերլուծության մեխանիզմների կիրառմամբ եկամուտների տարեկան օպտիմալացման զգայուն աճ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 7

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

ՆՊԱՏԱԿ՝ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԵՎ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ՝ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ

Խնդիր 1. Բարելավել և արդիականացնել ուսումնագիտական գործընթացի իրականացումն ապահովող ենթակառուցվածքները

Գործողություններ/միջոցառումներ

1. Իրականացնել նյութատեխնիկական բազայի շարունակական արդիականացման գործընթաց՝ գնահատելով նյութատեխնիկական ռեսուրսների առկա վիճակը
2. Իրականացնել համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկման և աշխատանքային հնարավորությունների բարելավման շարունակական բնույթի աշխատանքներ
3. Իրականացնել լսարանների, մասնագիտացված կաբինետների լաբորատորիաների մասնակի վերանորոգման, արդիականացման և կահավորման գործընթաց
4. Բարելավել ուսումնական մասնաշենքերի սանիտարահիգիենիկ և ջեռուցման համակարգերը
5. Զարգացնել գրադարանային գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները, համալրել գրադարանի նյութատեխնիկական բազան նորագույն համակարգիչներով, ինտերնետ կապով, ավելացնել էլեկտրոնային գրքային ֆոնդերը՝ ներգրավելով միջազգային գիտական գրադարանների ռեսուրսները
6. Պարբերաբար գնահատել գրադարանային ծառայություններից օգտվողների կարիքները
7. Համալրել թանգարանի առարկայական և էլեկտրոնային ֆոնդերը նոր ձեռքբերումներով
8. Իրականացնել թանգարանային ծրագրեր (էքսկուրսիաներ, միջոցառումներ հանդիպումներ, ցուցադրություններ)

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Նյութատեխնիկական առկա բազայի կարիքների գնահատման պլան-ժամանակացույց

1.2. Համալսարանում գործող առկա տեխնիկայի գործունեության բարելավում և տեխնիկայի թարմացում՝ տարեկան առնվազն տաս տոկոսի չափով

1.3. Տարեկան առնվազն երկու լսարանի, լաբորատոր սենյակի վերանորոգում

1.4. Տարեկան առնվազն մեկ մասնաշենքի սանիտարահիգիենիկ պայմանների վերանորոգում

1.5. Գիտական գրադարանի ֆոնդի թվայնացում՝ տարեկան առնվազն երեսուն տոկոս

1.6. Գրադարանային ծառայությունների բարելավման հստակ ժամանակացույց

1.7. ՀՊՄՀ պատմության թանգարանի այցելուների տարեկան առնվազն երեսուն տոկոսի աճ

1.8. ՀՊՄՀ դրական վարկանիշի բարձրացում և այցելուների կայուն աճ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 8

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՆՊԱՏԱԿ՝ ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄՈՒՀ-Ի ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՈՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԻՄԻՋ

Խնդիր 1 Ապահովել ՄՈՒՀ-ի գործունեության հրապարակայնության ու թափանցիկության շարունակականությունը, տեղեկատվության մատչելիությունը

Գործողություններ/միջոցառումներ

1. Մշակել ՄՈՒՀ-ի՝ հասարակայնության հետ կապերի վարչության քաղաքականությունը և ուղեկցող փաստաթղթերը
2. Համալրել և թարմացնել տարբեր ստորաբաժանումների գործունեության մասին տեղեկատվությունը ՀՊՄՀ կայքում, հրապարակել բոլոր հայտարարությունները, նորությունները, հաշվետվությունները և այլ տեղեկատվություն՝ բարձրացնելով գործունեության թափանցիկությունը
3. Ներդնել հետադարձ կապի արդյունավետության գնահատման և վերլուծության հստակ մեխանիզմ
4. Կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ համալսարանի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով
5. Մշակել և ներդնել Համալսարանի դիմորդների և գիտական հետազոտությունների, ծրագրերի ներգրավման մարքետինգային պլան՝ ձևավորելով մանկավարժական մասնագիտությունների նոր իմիջ

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ թափանցիկ և մատչելի միջոցների աճ

1. 2. ՄՈՒՀ - ի տարբեր ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ հավաստի տեղեկատվություն

1.3. ՄՈՒՀԻ-գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման և հասարակական պատասխանատվության ցուցանիշների շեշտակի աճ

1.4. ՄՈՒՀ-ի գործունեության կարճաժամկետ պլանավորման հնարավորություն և հասարակական պատասխանատվության ցուցանիշների շեշտակի աճ

1.5. Դիմորդների, գիտակն հետազոտական աշխատանքների թվի տարեկան աճ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 9
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ՝ ԽԹԱՆԵԼ ՀՊՄՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ, ՆՊԱՍՏԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ՝ ՋԱՐԳԱՑՆԵԼՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Խնդիր 1. Ապահովել համալսարանի համագործակցությունը միջազգային շահակիցների հետ, խթանել համալսարանի ուսանողների և դասախոսների մասնակցությունը միջազգայնացման գործընթացներում, բարձրացնել համալսարանի մասնակցությունը միջազգային ծրագրերում

Գործողություններ/միջոցառումներ

1. Բազմազանեցնել համագործակցության ուղղությունները արտասահմանյան համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ
2. Ներգրավել պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին կրթական, հետազոտական և կարողությունների զարգացման միջազգային ծրագրերում
3. Իրականացնել միջազգային դրամաշնորհային ծրագրերի մշակում և իրականացում
4. Նպաստել ՀՊՄՀ կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդաբանության բարելավմանը միջազգային ծրագրերի մասնակից դասախոսների փորձի տեղայնացման միջոցով
5. Բարձրացնել առցանց միջազգային ծրագրերում ուսանողների և պրոֆեսո րադասախոսականկազմի մասնակցությունը /դասախոսություններ, վերապատրաստման դասընթացների կազմակերպում համաժողովներ, սեմինարներ, միջմշակութային շփումներ/

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Տարեկան առնվազն երկու միջազգային նոր գործընկերների ներգրավում

1.2. Կրթական, հետազոտական և կարողությունների զարգացման միջազգային ծրագրերում ընդգրկված պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի աճ

1.3. Միջազգային դրամաշնորհային ծրագրերի առնվազն երկու տոկոսային աճ

1.4. Տարեկան առնվազն մեկ միջազգային փորձի ներդրված կրթական ծրագրի փորձարկում

1.5. Միջազգային ծրագրերում ներգրավված առնվազն տասնհինգ տոկոս պրոֆեսորադասախոսական կազմ

1.6. Համագործակցող ՄՈՒՀ-երի հետ միջֆակուլտետային փոխանակման անձնակազմի աճ

1.7. Միջազգային փոխանակումներին մասնակից աշխատակիցների աճ

1.8. Միջազգային ծրագրերում մասնակցող անձնակազմի և ուսանողների թվակազմի աճ համապատասխան հմտություններով

6. Բարձրացնել համալսարանի ֆակուլտետների ներգրավվածությունը միջազգայնացման գործընթացներում՝ ֆակուլտետների անձնակազմի շարունակական վերապատրաստումների և խորհրդատվության տրամադրման միջոցով

7. Խթանել համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը միջազգային շարժունության ծրագրերին

8. Բարձրացնել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի տեղեկացվածությունը միջազգային ծրագրերի, գիտաժողովների, դրամաշնորհային և կրթաթոշակային ծրագրերի մասին՝ տեղեկատվության տարածման և խորհրդատվությունների միջոցով

Խնդիր 2. Ընդլայնել Համալսարանի միջազգային գիտական համագործակցությունը՝ ակտիվ ինտեգրելով եվրոպական և եվրասիական հետազոտական տարածքին

Գործողություններ/միջոցառումներ

1. Աջակցել համալսարանի գիտական համագործակցությունը արտասահմանյան համալսարանների և գիտական կենտրոնների հետ, օժանդակել համալսարանի ներգրավումը Եվրոպական և եվրասիական հետազոտա կան տարածքին, օժանդակել միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը
2. Օժանդակել համալսարանի հետազոտողների ընդգրկմանը տարբեր միջազգային հետազոտական և կրթական նախագծերում. դրանց ֆինանսավորման աղբյուրների որոնման և հայտերի մշակման ուղղությամբ ցուցաբերել անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

2. 1. Համագործակցությունների և միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների մասնակցության թվի աճ

2.2. Միջազգային հետազոտական նախագծերում համալսարանի հետազոտողների մասնակցության թվի աճ

Խնդիր 3. Նպաստել օտարերկրյա ուսանողների և դասախոսների համակազմի աճին ՀՊՄՀ-ում՝ բարձրացնելով ՀՊՄՀ տեսանելիությունը միջազգային կրթական տարածքում

Գործողություններ. միջոցառումներ

1. Մշակել օտարալեզու կրթական ծրագրեր՝ շարունակաբար ավելացնելով օտար լեզվով դասավանդվող մոդուլների քանակը
2. Նպաստել օտարերկրյա դասախոսների ՀՊՄՀ այցելություններին
3. Ստեղծել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ՀՊՄՀ-ում օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրման և կողմնորոշման համար՝ օժանդակելով օտարերկրյա ուսանողների առաջնային խնդիրների լուծմանը՝ կեցության ապահովումը, կողմնորոշումը, կացության իրավունքի ձեռքբերումը և այլն
4. Որոշել օտարերկրյա ուսանողների ներգրավման թիրախային երկրները և ծավալել համակարգված գործունեություն
5. Ներդնել միջազգայնացման խթանման և բուհի տեսանելիության բարձրացման մարքեթինգային ռազմավարություն
6. Մշակել ՄՈՒՀ-ը միջազգային վարկանիշային համակարգերում առաջընթացի համար ուղենիշային քայլեր
7. Բարձրացնել ՀՊՄՀ տեսանելիությունը միջազգային ուսանողների շրջանակում ներկայացնելով ՀՊՄՀ մասին տեղեկատվություն տարբեր միջազգային կրթական կայքերում:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

3.1. Առնվազն մեկ օտարալեզու կրթական ծրագրի և տասն օտարալեզու մոդուլների մշակում և ներդրում

3.2. Օտարերկրյա դասախոսների կողմից տարեկան առնվազն երեք հանդիպումների առկայություն

3.3. Օտարերկրյա ուսանողների թվակազմի առնվազն հինգ տոկոս տարեկան աճ

3.4. Հայկական սփյուռքի գաղթօջախներից ուսանողների և հետազոտողների թվակազմի ներգրավում

3.5. Միջազգյանացման մարքեթինգային ռազմավարության պլան-ժամանակացույց, կատարողականներ

3.6. 2025թ Համալսարանը ներգրավել միձազգային վարկանիշավորման գոնե երկու համակարգում՝ QS Top Universities

3.7. Միջազգային տարբեր ուսանողական ֆորումների մասնակցություն առնվազն տարվա մեջ մեկ անգամ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 10
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿ՝ ՆՊԱՍՏԵԼ ՀՊՄՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Խնդիր 1 Վերամշակել կրթության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

Գործողություններ/միջոցառումներ

1. Վերանայել որակի ապահովման քաղաքականությունը, հայեցակարգը, կրթության որակի ապահովման և որակի կառավարման ձեռնարկը
2. Կատարելագործել որակի ապահովման ներբուհական և ստորաբաժանումների շարունակական բարելավման գործուն համակարգերը՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի գործարկումը և իրականացումը
3. Իրականացնել կրթության որակի ապահովման և կառավարման համակարգի բենչմարկ գործընկեր հաստատությունների հետ
4. Մշակել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգում որակի ապահովման պատասխանատուների աշխատանքային նկարագրերը և հստակեցնել գործառույթները

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Որակի ապահովման և կառավարման արդյունավետության աճ՝ հաստատված փաստաթղթեր, ընթացակարգեր

1.2. ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական ներդրված համակարգ որակի ապահվման և կառավարման ներքին համակարգերում

1.3. Ներբուհական որակի ապահովման և կառավարման համակարգի վերաբերյալ ամբողջական վերլուծություն և առաջարկությունների փաթեթ

1.4. Որակի ապահովման պատասխանատուների գործառույթների հստակ նկարագրերի առկայություն և դրանց կիրառում

Խնդիր 2. Նպաստել կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի զարգացմանը, որակի ապահովման գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալման և իրազեկվածության բարձրացմանը

Գործողություններ/միջոցառումներ

1. Կազմակերպել ՄՈՒՀ-ի կրթության որակի ապահովման գործընթացների և աշխատանքների բարձրացմանն ուղղված շարունակական միջոցառումներ
2. Ներգրավել բուհի բոլոր շահակիցներին ՄՈՒՀ-ի կրթության որակի ապահովման գործընթացներում՝ ապահովելով ընդունվող որոշումների և դրանց իրականացման արդյունքների հրապարակայնությունը ու թափանցիկությունը
3. Հաստատել և ընդլայնել համագործակցությունը Հայաստանյան և արտասահմանյան ՄՈՒՀ-երի նմանատիպ կառույցների հետ
4. Ապահովել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ թափանցիկությունն ու հրապարակայնությունը

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

2. 1. Շահակիցների շրջանում որակի ապահովման և կառավարման գործընթացների մասին իրազեկվածության մակարդակի աճ

2. 2. ՄՈւՀ-ի որակի կառավարման համակարգում շահակիցների ներգրավման աճ

2. 3. Գործընկեր հաստատություններում ՈԱ լավագույն փորձի տեղայնացում

2. 4.

Խնդիր 3. Պատշաճ կերպով պատրաստվել և կազմակերպել ՄՈՒՀ-ի առաջիկա հավատարմագրման գործընթացը

Գործողություններ/միջոցառումներ

1. Հավաքագրել անհրաժեշտ տվյալները, ինքնավերլուծությունները և դրանց հիմքերը բուհի կառուցվածքային ստորաբաժանումներից
2. Աջակցել որակի ապահովման գործընթացների իրականացմանը համալսարանի բոլոր ստորաբաժանումներում՝ իրականացնելով խորհրդատվություններ
3. Կատարելագործել որակի ապահովման և կառավարման գործընթացում կիրառվող հարցաշարերի բովանդակությունը
4. Իրականացնել որակի ներքին ապահովման համակարգի գործունեության արդյունավետության գնահատում
5. Համակարգել և կազմակերպել ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության պատրաստման և ներկայացման գործընթացը

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

3.1. Ստորաբաժանումներում բարելավման պլանների առկայություն

3.2. Վերապատրաստված որակի պատասխանատուներ

3.3. Որակի ապահովման և կառավարման վերամշակված գործիքակազմերի առկայություն՝ հարցարաններ, վերջնարդյունքներ

3.4. Որակի ապահովման պատասխանատուների տարեկան հաշվետվություններ: Գնահատման արդյունքների համեմատական վերլուծությամբ արդյունավետության բարձրացման ցուցանիշների ներկայացում: SWOT վերլուծություն

3.5. ՄՈՒՀ-ի ենթակառուցվածքային ինքնավերլուծության առկայություն և հավատարմագրման պատրաստություն

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 11
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ՆՊԱՏԱԿ՝ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԵՎ ԸՆԴԼԱՅՆԵԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ, ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄՈՒՀ-Ի ԱՎՏՈՄԱՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Խնդիր 1. Լավարկել ՀՊՄՀ կրթության էլեկտրոնային համակարգի գործունեությունը և ուսումնական գործընթացի շարունակականությունն առցանց տիրույթում

Գործողություններ. միջոցառումներ

1. Շարունակել ընդլայնել Google for Education կրթական համակարգի լայն կիրառմանը՝ ՀՊՄՀ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում
2. Ուսումնասիրել այլընտրանքային կրթական էլեկտրոնային համակարգեր և գործիքներ
3. Համակարգել ՄՈՒՀ-ի ներքին @aspu.am տիրույթում տեղեկատվության տարածման և օգտատերերի կարգաբերման գործընթացները

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

1.1. Հետադարձ կապի ապահովում Google Support-ի հետ և առկա թարմացումների վերաբերյալ ներքին շահակիցների իրազեկում (ուղեցույցների, սեմինարների միջոցով)

1.2. Այլընտրանքային էլեկտրոնային համակարգի և գործիքների լավագույն փորձի վերաբերյալ առաջարկությունների փաթեթի առկայություն

1.3. Տեղեկատվության արագ և մատչելի բաշխում

Խնդիր 2. Կանոնակարգել առցանց ուսումնական գործընթացի բոլոր օղակների գործառույթները և բարելավել մասնակիցների՝ էլեկտրոնային գործիքների կիրառման գրագիտությունը

Գործողություններ/միջոցառումներ

1. Օպտիմալացնել ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների գործառույթներն առցանց տիրույթում
2. Վերամշակել էլեկտրոնային ուսուցման կազմակերպման առկա ուղեցույցները
3. Շարունակաբար մշտադիտարկել էլեկտրոնային դասընթացները՝ դուրս բերելով առկա թերությունները և մշակել բարելավման քայլեր

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

2.1. Ուսումնական առցանց գործընթացի կազմակերպման համակարգի վերաբերյալ արդյունավետության ցուցիչների, հարցումների առկայություն

2.2. Էլեկտրոնային ուսուցման մասնակիցների գրագիտության բարձրացում՝ հանդիպումների, քննարկումների միջոցով

2.3. Գրագետ կազմակերպված էլեկտրոնային դասընթացներ, և դրանց մասին վերլուծություններ

Խնդիր 3. Լավարկել ՄՈՒՀ-ի «Ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ»-ի գործառույթները

Գործողություններ/միջոցառումներ

1. Ընդլայնել համալսարանի «Ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգի» գործիքակազմը, ավելացնել մոդուլների ֆունկցիոնալությունը



Առաջընթացի գնահատման ցուցիչներ

3.1. «Ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ»-ի բարելավված տարբերակ՝ նոր գործառույթներով